

## ԿԻՐԱԿՈՒԱՑ ՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՆՈՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

ԴՕԿՈՒՄԵՆՏ ՆԻՄԿԵՐԻ ԵՐԿ

1

ՆԵՐԱՇՈՒԹԻՒՆ

«Ո՞չ, ինչպէս կու զէի՝ որ այսօր և էգուց՝ և ամեն օր կիրակի լինէր» :

Ո՞ր ծնողի չի պատահել լսել այս ջերմ ցանկութիւնն, որ գուրս է թռչում մանկական բերանից։ Ո՞վ սիրտ կանի մեղանից քմծիծաղով պատասխանել այսպիսի խոստովանութիւններին և տեսնել նոցա մէջ մի նոխատելի՝ պարաւանքի արժանի բան, մի բան՝ որ հակումն ունենար դէպի ծուլութիւն։ Մինչև անգամ՝ եթէ մեր կերպարանքը խստութիւն արտայայտէր այս գիպուտածում, սակայն մեր սրտի խորքում չէինք կարող չխոստվանել այս մանկական ցանկութեան արդարութիւնն և չհամակրել նորան սրտանց։

Արդարեւ՝ մանկական ձգտողութիւնն ունենալու մի շաբաթուայ մէջ եօթը կիրակի սովորաբար ներկայացնումէ լոկ այն անընդմիջական և անկեղծ՝ կեանքի վերայ ունեցած հայեացքի անմեղ արտայայտութիւնը, որով իւրաքանչյիւրը չափահաներից անցել է իւր ժամանակին։ Բաւական է նայել առօրեայ կեանքի վերայ, որպէս զի համոզուենք՝ թէ այս ձգտողութիւնը դէպի մի որոշ տեսակ յարմարութիւն, ձգտողութիւնը ազատ լինելու ամեն կապերից, ճնշումից և բռնութիւնից գեռ ևս նիրհումէ իւրաքանչյիւրիս մէջ և սպասումէ պատեհ գիպուտածի կամ առթի իւր լիակատար արթնութեան համար։ Տեսնելով՝ ինչպէս մեր մանուկներն, որ գեռ նոր ուղարկուած էին գպրոց, վերագառնումնեն, ուրախութիւնից փայլելով՝ և ինչպէս նոքագումեն գրքերի կապոցները անկիւնը՝ քաղաքի գարպասից դուրս վազելու համար, ուր վարժապետը սպասումէ նոցա ընդհանուր գրօսանքի համար, որը այսօր գասերի տեղ պէտք է բռնէր։ տեսնելով մանուկների այս ուրախութիւնն և ցնծու-

թիւնը, մենք, մեխած լինելով մեր աշխատութեան սեղանին, չենք կարող չնախանձել նոցա և չասել հառաջով՝ « Երջանիկներ՝ որքան լու կը լինէր, եթէ մենք էլ մի քիչ զբօմնէինք » : Նայեցէք յետոյ, տօն օրերը ժողովրդի ամբոխի վերայ։ որ գուրս է թափում քաղաքից դուրս՝ արհեստաւորների, գործակառարների ու գործարանների տղամարդ ու կին մշակների վերայ։ Նոքա ընդարձակութիւն են որոնում ինչպէս սանձարձակ ձիերը, նոքա ոստոստումեն, պարումեն, իրար են անցնում և ամեն կերպով վաղվզումեն։ Նոցա դէմքերը կենդանութիւնով լի են և պերճախօսութիւնով վկայումեն՝ թէ այս մարդիկը գտնւումն իւրեանց տարրի մէջ։ Անջատուելով պրօֆեսսիօնական աշխատանքի տաժանական անիւից, իւրաքանչիւրը նոցանից զգումէ իւրեան ինչպէս մի թռչուն, որն ազատուել է վերջապէս վանդակից և թեւերը թափի է տալիս թռիչքը նորոգելու համար։ Այսպիսի ձգտողութիւնը ճեմել և խաղալ ընդարձակութեան մէջ, այսպիսի կայտառութիւնը բնազդական տրամադրութիւն է ամենքի մէջ, որոնք շաբաթուայ աշխատանքից յետոյ, որը պահանջումէ միայն այս կամ այն անդս մի մեքենան շարժողութիւնը, վերջապէս ստանումէ կարողութիւն դրատելու իւր բոլոր անդամները առանց ստիպողութեան և ճնշողութեան։ ամենքի մէջ, որոնք, ազատուելով նեղ, փակ հեղձուկ բնակարաններից, սկսումեն լուանալ իւրեանց խոնջացած կուրծքը թարմացնող ու ազատ օդային ծովում, արևի կենդանարար ճառագայթների տակ, որ բացարձակ երկնակամարի բարձրից լուսաւորում և տաքացնում է։ Նւ շարժողութեան այս անստիպուզականութիւնը ու ազատութիւնը՝ ազատ կրծքով ազատ օդի շունչ քաշելը, պայծառափայլ արեհի այս կենդանարար ջերմութիւնը, բոլորը միասին ներգործելով միաժամանակ, պատճառում են հոգու թարմութիւն և վեհութիւն, ուրախ զուարճայի և բռւական տրամադրութիւն, կիրակուայ այն հանդիսաւոր հոգեկան տրամադրութիւնը, որը թոյլ է տալիս իւրաքանչիւր մարդու ասել Գեօթէի հետ միասին « Hier bin ich Mensch hier darf ichs sein » (այստեղ ես զգումեմ ինձ մարդ, այստեղ պէտք է լինիմ \* )։ Ուրիշ խօսքերով՝ տօն օրերը

(\*) Փաւուսատի խօսքերը

իւրաքանչիւրը մեզանից սկսումէ իւրեան զգալ իբրև մարդ, իւրաքանչիւր ոք դառնումէ ամբողջ, լիապէս բացուած մարդ-կային էակ:

« Տօն օրը ես մարդ եմ » : Այս միտքը, որ դուքս է թռել ամբողջ շաբաթը իւր առանձնասենեակում չարչարուող մտաւոր մշակի գլխից, արտայայտումէ չափահաս անձի հայեցակէտից՝ իսկ նոյնը, ինչ որ պուկ է գալիս մանկական լեզուից իբր անմեղ ու աղօտ ցանկութիւն:

Նոյն այս միտքը կարող է լինել (հիմնակէտ) և բժշկի համար, որ պաշտպան է հանդիսանում շաբաթական հանգըստութեան օրուայ պահպանելուն. պաշտպան առողջապահական գիտութեան այս գլխաւոր պատուիրաններից մինին: Յիրաւի իսկապէս բժիշկն է ամենից առաջ և ամենից վերջը մարդուս մէջ տեսնում մի պյն մարդ, այսինքն մարմին ունեցող, որի բարօրութիւնը առաջին տեղն է բռնում՝ և բոլոր ուրիշ շահերի առաջն է կտրում: Թէպէտ և դրութիւնը՝ « Առողջութիւնն է բարձրագոյն բարիք, ձևական կողմից վաղուց արդէն ընդհանրացել է. սակայն այս գրութեան իմաստը մեծամասնութեան համար մնումէ կատարելապէս անհասկանալի ճշմարտութիւն, որին գժուար չի համոզուել, տեսնելով՝ թէ ինչպէս մարդիկ գործնական կեանքում ձգտումեն այս « բարձրագոյն բարիքին »: Դժուար չի՝ ասումենք՝ համոզուել, որ իրականապէս և գլխաւորապէս ձգտումեն ապրուստի միջոցներ հայթայթելուն, քան ապրուստին: Ամենաառողջ կերպիւ ապրումեն՝ այսպէս ասած՝ բնական կամ նախնական ազգերը, որոնց պիտոյքները չնշին են, գոյութիւն պահպանելը դիւրին է, և իւրաքանչիւր ոք կարող է իւր հակումների համաձայն ապրել: Կիրթ ազգերի մէջ՝ ընդհակառակը՝ կենցաղավարութիւնը նոյնքան անբնական է և անառողջ, որքան կարիքները բարձրանումեն գոյութեան բարդւող պայմանների մէջ, որքան կեանք պահպանելը թանկ է նըստում՝ պահանջի բարձրանալովը, որքան աւելի ստիպողութիւն են դնում իւրաքանչիւր անձնաւորութեան վերայ հասարակակոն գտնապան պահանջները: Զոկ անձնաւորութիւնը կորչումէ այս դիպուածում, լուծւումէ զանգուածի մէջ և մեծամասնութիւնը սկսումէ հրամանագրել սովորութիւններ և բարքեր, որոնց իւրաքանչիւր ոք պարտ է հետեւել, ով չի ուղում, որ իւ-

ը՞ան ամեն քայլում չկոչեն ուրացող, յիմար կամ դեռ աւելի վաստ Այստեղ սկսում օրէնսդրի պաշտօնը, որ պէտքէ հոգայ՝ որպէս զի բարքերը և սովորութիւնները անդայելչութիւն և չարաշար կիրառութիւն չդառնան։ Խսկապէս այս էին համարում ժողովուրդ առաջնորդելու էական խնդիր այնպիսի մարդիկ՝ ինչպէս են Մովսէս և Լիկուրգոս։ Մանաւանդ սոցանից առաջինը մի շարք օրէնքների օգնութիւնով (կերակուր պատրաստելու վերայ, պասի մասին, թշվատութեան, մարմինը կանոնաւորապէս լսւանալու և շաբաթ օրուայ հանգստութեան վերայ) կարողացաւ այնքան լաւ պահպանել իւր ժողովրդի մարմնական բարօրութիւնը անապատի մէջ քառասուն տարւայ ընթացքում անաւողջ կեանք անյեկացնելու ժամանակ, որ բացի բորոտութիւնից ուրիշ ծանր ընդհանուր տկարութիւն չերեւցաւ։ Մեզ աւելի հետաքրքրող պատուիրանը այսպէս էր ասում՝ «Վեց օր աշխատեցէք, իսկ եօթերորդ օրը, նուիրեցէք հանգստութեան»։ Յունական օրէնսդիրները հետեւումէին այլ ձեի՝ նոքա խսկապէս տօներ չէին հաստատում, բայց ժամանակ առ ժամանակ նշանակումէին մարմնամորգական խաղեր, երբ ժողովուրդը հանգստանումէր և զրւարճնումէր ամինատզնիւ և ամինալիեմ կերպով։

Ճշմարիտ է՝ հեռաւոր ժամանակներում ապրած Մովսէսը և Լիկորգոսը կարող էին բաւականին դիւրաւ իրագործել իւրեանց առողջապահական խնդիրները։ Հասարակութեան խումբերը ընդհանրապէս դեռ շատ փոքրաթիւ էին, գրեթէ չէին ենթարկուում փոփոխութեան տեղափոխութիւնից և գաղթելուց, և յօժարութեամբ թոյլ էին տալիս առաջնորդել իւրեանց ընդհանրապէս ասելով՝ մարդկութիւնը այն հեռաւոր մանկական տարիներում աւելի հակումն ունէր անսալու քան այժմ։ Ներկայումս այնպիսի մարդկային հասարակութեան հետ ես գործ ունենում, որ մի քանի հազար տարիներով ծերացած է և ամնդագար շարժողութեան մէջ է՝ խմբերի բաղադրութիւնը միշտ փոխուումէ՝ թէ հին անդամների հեռանալով՝ թէ նորերի գալովը։ Այժմ իւրաքանչիւր ոք, նախ քան մի քան կլսի և ձեռք կզարկի նորան, ուղումէ նախապէս իմանալ «Ինչուն և ինչպէս»։ Սորա հետ էլ՝ ներկայումն առողջապահական պահանջների գործնականապէս իրագործելը անխուսափելի կերպով

Հասարակութեան անհատ անդամի ազատ կամքին է թողուած, և իւր յաջողութեան համար ոչ միայն վերեից այլ և ներքեից պէտքէ կազմակերպուի: Այժմ իշխանութիւնը սահմանափակուումէ ընդհանուր ձեւերի հրամանագրութիւններ տալովը, իսկ յետոյ հասարակութեանը թոյլատրուումէ ինքնուրոյնաբար այդ ընդհանուր դրութիւնները յարմարացնել տեղի, ժամանակի և հանգամանքների հետ: Խայրայեղ դիպուածուում իշխանութիւնը առաջ է դուրս գալիս իւր բարի օրինակով՝ մի երեսոյթ՝ որ միշտ աչքի չի զարնուում, մանաւանդ ինչ որ վերաբերուումէ կիրակուոյ հանգստութեանը: Հասարակութեան առողջութեան գործի մէջ կոչուած առաջնորդողները այժմ բժիշկներն են իրանց մասնաւոր խրատներով, լաւ օրինակներով, յօժարակամ հըսկողութիւնով: Խնչպէս նոցա գործունէութեան աւելի նշանաւոր արդիւնք կարելի է ցոյց տալ առողջութիւնը պահպանելու համար հասարակական դաշնակցութիւնների կազմութիւնքը, և հասարակութեան մէջ հանրամատչելի առողջաբանական գրուածների տարածումն: Գլխաւոր գործը, որով պարապումն առ ժամանակ այս դաշնակցութիւնները, է կռուել համաճարակ տկարութիւնների հետ և սակայն սոցա գործունէութիւնն արդէն բաւականին պարզ ցոյց տուաւ՝ թէ վարականիւթի հետ կռուելու մէջ գլխաւոր յոյսը պէտք է դնել ոչ թէ բժշկական սատիկանութեան, այլ ինքնօգնութեան վերայ: «Կիրակին տօնելու համար կազմած Զուիցարիական ընկերութեանն» \*) որ հրաւիրել էր այս հարցը հանրօրէն քննելու, պատկանումէ ևս աւելի մեծ արժանիք: Որ գեռ շատ շատերը շարունակուումն կիրակուայ հանգիստը համարել իրրե զուտ եկեղեցական օրէնք, որի պահպանութիւնն այնքան սակաւ պատշաճ է, որքան մարդը վճռողապէս կտրուում է կրօնականութիւնից, զանազան առ ձեռն գաւանութիւնների ձեխ տակ: Այս սխալ կարծիքի կռւակիցների խիզը հանգստացնելու համար, ես կարող եմ ցոյց տալ՝ ի միջի այլոց՝ յայտնի ընկերվարական Պրուդօնի վերայ, որ իւր «կիրակուայ տօնախմբութիւն», ասուած շարագը բութեան մէջ, հիմնուելով անտեսական և բարոյագիտական կշռագատութիւնների վերայ, ապացուցանումէ՝ թէ կիրակուայ

(\*) Որի վճռովը այս ընթերցողներին առաջարկուող շարագրութիւնը ըստացել է միցանակ:

Հանգիստը հաստրակական և մասնաւոր բարօրութեան անհրաժեշտ պայմաններից մէկն է։ Սոյն միտքը Անգլիայում յայտնել են ուղղակի ժողովրդից մշակ գասակարգից դուրս եկած հրապարակախօսները՝ ինչպիսի են Կուլինտօն (Culinton) Յոնգէր (Younger) և Փարքէր (Farquhar)։

Յիշած զուիցարիական ընկերութեան արած քայլը՝ անտարակոյս՝ պատճառ կդառնայ, որ մեր հարցի քննադատութիւնը յանձն կառնեն և առողջապահական լնկերութիւնների առաջնորդողները, որոնք մինչեւ այժմ հարկաւոր ուշադրութիւն չեն դարձրել սորա վերայ։ Առաջարկած շարադրութիւնս առաջինն է (Եթէ հեղինակը յի սխալ լում), որ մեկնաբանումէ այն առողջապահական հիմքերը, որոնք ապացուցանումեն կիրակուայ հանգստի կարեռութիւնը բուն այնպիսի դրականութեամբ, ինչպէս արդէն ապացուցուած է՝ օրինակի համար՝ վարակաբուժ միջոցների կարեռութիւնը համաճարակ հիւանդութիւնների երեւելու ժամանակ և լն։

Մենք՝ հարկաւ՝ չենք խարում մեզ յուսալով՝ թէ կիրակուայ աշխատանքից առողջութեան համար յառաջացած վնասի պարզաբանելը այնքան դիւրին է, որքան այն վնասի պարզաբանելը, որ յառաջանում է վարակաջինջ գործի մէջ եղած զեղծումներից։ Մանաւանդ դժուար է համոզել այն դանդաղամիտ և կարճատես մորդկանց, որոնք աւելի մտածում են բաց չթողնել մի րոպէ և որոնք կիրակուայ հանգստութեան մէջ տեսնում են միայն նորա հետ կապուած «գործերի զեղծումն և յետաձգութիւնը»։ Մենք շատ կասկածում ենք՝ որ այսպիսի մարդկանց կարելի լինէր համոզել նաև այն դիպուածում, եթէ յաջողուէր գոտնել մշակների յանկարծակի մահուան օրինակների, որոնք յառաջացած լինէին միայն կիրակուայ հանգստութիւնը չպահպանելուց։ Դառնալով հասկացող և համոզուելու ընդունակ ընթերցողին, մենք կարող ենք ցոյց տալ ոչ հազուագիւտ օրինակներ, ինչպէս մշակներն, որոնք գտնուում են ծաղիկ հասակում և առերեւոյթս քաջառողջ են, յանկարծ մեռնումն թռքի բորբոքումից կամ այլ տենդային հիւանդութիւնից, որոնց տանում են ուրիշ աւելի թուլակազմ մարդիկ։ Մեռնում են այնպիսի վայրկենում՝ երբ անխոնջ աշխատելով տարէց տարի, շաբաթից շաբաթ, օրէց օր պատրաստում են իւրեանց

սեպհական գործ սկսել, անցնել աւելի յարմար կենցաղավարութեան։ Յոյզ տաճք մշակ դասակարգի մէջ պատահած մասների թուի աճելը, և նոյնպէս նոցա թուի աճելը, որոնք վաղաժամ զրկւում են այս կամ՝ այն նշանաւոր գործարանի ծառայութիւնից (օր. աչքից) կամ թէ անբնդունակ են դառնում աշխատելու ուրիշ զանազան ճանապարհներով։ Բոլորովին չափազանցութիւն չէ, եթէ ասեմ՝ թէ անշմարելի կերպով, աստիճանաբար նենգութիւնով առողջութեան մօտեցող թուլութիւնը և հիւծութիւնը, որ անառողջ կենցաղական սպարութիւնների հետեանքն է, լափումէ գոնեա այնքան մարդկային կեանքեր, որքան խոլերը և տիֆը։ Մի խօսքով մարդկային առողջութեան վիճակը ներկայ հասարակական պայմաններում շատ գոհացուցիչ չէ և պահանջումէ ուժգին օգնութիւն։ Կարելի է՝ մեր գիրքը կօգնի ընթերցողին բանալ իւր այքերը այս իրողութեան վերայ, և տեսնել կիրակուայ հանգստութեան մէջ հսկայական չարիքն հեռացնելու գլխաւոր լծակներից մէկը։

Սակայն՝ նախ քան շաղկապած տեսական մեկնութիւն անելը, ես աւելորդ չեմ համարում մի քանի իրողութիւններ և յաջողակ ձեաւորուած կարծիքներ յառաջ բերել, որոնք մեր առարկային են վերարերում։ այս անումեմ յուսալով նախապէս հետաքրքրել ընթերցողին և տրամադրել նրան նոր վարդապետութեան օգտին։

Ես մէջ կրերեմ մի գործնական օրինակ վեր առած իրական կեանքից և հաղորդուած լիապէս արժանահաւատ անձնաւորութիւնից։

Նատ տարի առաջ, դեռ մինչեւ երկաթուղիներ շինելը, երբ բոլոր ապրանքները տեղափոխումէին արեւելքից արեւմուտք մեծ կառքերով և երբ այս օրինակ տեղափոխութիւնը հարիւրաւոր մղոնի վերայ տեսումէր ութը և իմնը շաբաթ, կիրակուայ հանգստութեան պաշտպանները հակաւակորդների հետ հետեւալ գրաւը բռնեցին։

Երկու սայլապան միատեսակ սայլով նոյնաչափ բեռնով սարգով, պէտք է ճանապարհ ընկնէին երկուշաբթի առաւտօր մի և նոյն ճանապարհով մի և նոյն նշանակած տեղը. կիրակուայ հանգստութեան պաշտպանը պէտք է ամէն կիրակի կան-

գնէր, միւս սայլավարը պէտքէ գնար և կիրակի օրը: Խնդն ի.  
բան յայտնի է՝ թէ գրաւը պէտք է տանէր նա, սվ վաղ կ'հաս-  
նի նշանակած տեղը:

Ամենայն ուշագրութեան արժանի է գործի ելքը:

Որովհետեւ ապրանքակիր սայլերը ընդհանրապէս կարող են  
կւրագանչիւր օր անցնել սրոշեալ տաղածութիւն, մօտաւորա-  
պէս երեք կամ չորս մզոն, մէկ պանդոկից մինչեւ միւսը, տո-  
նի հակառակորդը առաջին կիրակին կիրակուայ հանգստու-  
թեան պաշտպանովի առաջը կտրեց երեք կամ չորս մզոնով:  
Սակայն վեցերորդ շաբաթը՝ վերջինս առաջ գնաց և ժամանեց  
իւր ժամանակին տեղը զուարժ և թարմ ձիերով. մի՛շդեռ միւս  
սայլավարը, որ շարունակ ամէն օր գնումէր և քշումէր և ու-  
ժամանակին, նշանակած պայմանաժամից շատ ու-  
շացաւ:

Եյս պատմութիւնը պարզաբանումէ գործնականապէս նոյնը  
ինչի վերայ մի քանի տասնեակ տարի առաջ խօսումէր բրիտա-  
նական պարլամենտում անդիմացի բժշկի ֆարբը, որ պոհան-  
ջումէր հաստատել գործարաններում աշխատանքի կանոնա-  
ւոր օր:

Ես նայումեմ կիրակուայ վերայ, ասումէր նա, ինչպէտ հան-  
գստանալու կարեռ օրուայ վերայ, ինչպէս այնպիսի օրուայ  
վերայ, որ ամբողջապէս պէտք է պատկանէր մեր մարմնուն  
յատուկ՝ ինքնանորոգութեան և ինքնավերածնութեան ուժին:  
Նթէ միանգամ մարդուս գործարանակազմի ընդունակութիւնը  
կորածէ: ոչ մի գեղչի կարող նրան օգնել: Ճշմարիտ է՝ գիշեր-  
ուայ հանգստութիւնը վերակադնումէ մասնամբ մեր ուժերը,  
բայց միայն մասամբ, այլապէս ասած, միայն պակաս չափով,  
Ուստի իմաստուն օրէնսդիրը նշանակել է եօթը օրից մէկը  
հանգստանալու օր, որ այս յաւելուածով գիշերային հանգս-  
տութեան վերայ օգնութիւն տրվի գործարանակազմի մաշած  
ուժերի՝ կարելոյն չափ՝ լիազոյն վերանորոգութեան: Անընդ-  
հատաշխատանքի, առանց հանգստութեան՝ վնասակար ներգոր-  
ծութիւնը, մարդու մէջ գրեթէ, գառնումէ ոչ այնպէտ նըկա-  
տելի ինչպէս գրաստի մէջ, բայց վերջի վերջոյ մարդ ընկճւու-  
մէ աւելի արտէ, վերջինից, իւրաքանչիւր աշխատութեան վեց  
օրից յետոյ հանգստութեան օր նշանակելը մարդկային քնու-

թեան անհրաժեշտ պահանջն է, այլ ոչ թէ մի որ և է կամայական միջոց կամ՝ մոտացածին բան։ Մարդուս գործ արանակազմը իսկ այնպէս է շինած, որ կարիք կայ իւրաքանչիւր եօթը օրից մէկը նուիրել ամէն մտաւոր և ֆիզիքական աշխատանքից լիակատար հանգստանլուն։

Ֆարրի այս ծանուցումի հետ ամբողջապէս համաձայնուեցաւ ամիրիկական մի բժշկական ընկերութիւն, բազկացած 25 անգամից։ Իմ դիտողութիւններով՝ ասաց մինը սոցանից՝ բժիշկ Ուորքինը, շաբաթուայ վեց օրում աւելի լաւ աշխատումնն այնպիսի մարդիկ, որոնք սովորեն կիրակի օրերը մի կողմը դնել աշխարհային հոգսերը ու աշխատանքը։ Ես համոզուած եմ նոյնպէս, նոքա վեց օրում աւելի են աշխատանք անում, և աշխատանքը ի՞նքն աւելի լաւ է, քան այն դիպուածում երբ նոքա փորձումն բոլոր եօթն օրը աշխատել։

Անգլիացի ուսումնական իրաւագիւտ Զ. Ուիլսօնը ասաց մեռնելուց առաջ իւր բարեկամներից մէկին հետևեալը։ «Ասացէք բոլոր իրաւագիւտական ճանապարհ ընտրողներին, որ նոքա կիրակի օրերը չաշխատեն, եթէ կամենումնն յաջողութիւն ունենալ։ Կիրակի օրուայ աշխատութիւնը յաջողութիւն յի բերում։ Բոլոր իմ տօնային աշխատութիւնները վերջացել են միայն անյաջողութիւններով։»

Թէյմզէ գետի վերայ գտնուած շոգենաւերից մէկում կաթսան ճայթելու պատճառաւ դատաստանական պատասխանատութեան կոչուած մեքենավարները ծանուցին՝ թէ դըքաղտութեան պատճառը կիրակի օրուայ աշխատանքն է, որովհետեւ անընդհատ՝ անխոնջ աշխատանքը բըթացնումէ և ուժատումէ բանտորի մէջ, որոնց գործը 18 48-ին դատարանի առաջ քըննուումէր։ Մի քանի տարուայ ընթացքում նոքա ստիպուածէին բանել շարունակ բոլոր եօթը օրը շաբաթուայ։ Առանից յառաջացած ուժի հիւծութիւնը հասցեց այնտեղ, որ գործը վատ և վատէր գնում։ Դատարանը սահմանափակեց բանելու ժամանակը շաբաթական վեց օրով, և շուտով յոյտնուեցաւ, թէ կրծատած ժամանակամիջոցում սկսեցին արտադրել աւելի լաւ, քան արտադրումէին առաջ երբ բանումէին եօթն օր։ Թիշենք նոյնպէս և ինչինչ գեկադների մասին այսինքն տասնե-

քորդ օրը հանգստանալու մասին, որ ներմուծածէր ֆրանսիական մեծ Յեղափոխութիւնը իւր տասանորդական սեստեմով, փոխանակ եօթերորդ օրուայ: Բանւորներից մէկը, որ քնակումէր այն ժամանակ Փարիզի մէջ, ասումէր հետեւալը՝ Դեկադը բոլորովին նպատակայարմար կարգադրութիւն չէ, ընդ հակառակը, ինչ որ չասեն, մեր կիրակին ամէնից լաւն է: Իրապէս, այն ժամանակ մենք խսկական տօն չունէինք՝ տասներորդ օրուայ ընթացքում բանելը բոլորովին չէր արգելւում՝ օրէնքով. հանգստութիւնը բոլորովին պատուիրուած չէր. Արհեստանոյները մուռումէին բայց, մենք բանումէինք եթէ ուղղումէինք, և յաճախ օրէն բանումէինք, երբ և չէինք ուղում, և այն տւելի ևս քան լի օրը, Բայց և այնպէս բոլոր գեկազների ժամանակ ես չեմ յիշումոչ մի ամիս, որ ինձ յաջողուէր այնքան տշխատել, ինչքան յաջողուել էր առաջ և յետոյ: Ես շատուրախացար, երբ մեր հին շարաթները վերսախին բռնեցին գեկատների տեղը: Ոչ, ոչ, կիրակին ամենիցլաւն է, կեցցէ կիրակին»:

Այս օրինակները՝ գրեթէ՝ բաւական կլինին, որ ընթերցողը ուշ դարձնէ մէկ գրութեան վերայ, որը համառօտ և աւելի լաւ ձեւալորուած էր Պրուքոնից և է այս— թէ կիրակի օրուայ կարգադրութիւնը անձնական կարծիքի խնդիր չէ՝ այլ գիտնական հմտութեան:

Եւ այս հմտութեան համառօտ հանդիպին մենք ձեռնամուխ՝ ենք լինում:

## II

## ՄԱՐԴԿԱՑԻՆ ՄԱՐՄՆՈՒ ԿԱԶՄՈՒԱԾՔԸ

ԵՒ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ:

Հին անդամազննիչները՝ «չ առանց հիմքի՝ մարդկային կենդանի մարմինը գործարան էին կոչում», այսինքն մի քանի համաձայն և միասին բանող գործիքների հաւաքածոյ, որոնք զետեղուում են մարմնու զանազան խորշերում և որոնց արդիւնքը ուրիշ խօսքով ասած՝ նոցա կանոնաւոր գործողութեան հետեւանքը՝ է ֆիզիքական և մտաւորական բարօրութիւնը: Սակայն այս գործարանական կազմուածքը տարբերւումէ մեքենական գործարանից, նորանով որ նորա առանձին մասերը չեն կարող խանգարուած գիտուածում՝ փոխարինաւել նոր, թարմ մասերուլ ուստի ամբողջ մնումէ միանգամ ընդ միշտ վնասուած:

Ճշմարիտ է, կարելի է՝ որ՝ օրինակի համար՝ երբ թոքի մի մասը վիճասուռմէ, նորա գործը մի քանի ժամանակ կարող է փոխարինել մի ուրիշ մասի սաստկացրած՝ յաւելուած աշխատանքով, բայց այս լինումէ միայն այն հաշուով, որ թոքի այս առողջ մասը կամաց կամաց կվնասուի, և երկու վնասուած մասը անյապան կյառաջացնեն սրտի տկարութիւն, և վերջինս երիկամունցները կտկարացնի, մինչև որ ամբողջ մարմինը վերջապէս կլնինի տկարութեան մէջ։ Ուստի չափազանց միակորդանի սխալ կիրնէր, եթէ մենք հոգայինք մի որ և է գործարանի՝ օրինակի համար՝ ատամոքսի բաւականութիւն տալու։ Ընդհակառակը՝ կարեար է միշտ և մի եղանակով հոգալ մարմնու բոլոր գործարանների մասին առանձին առած, հաստատապէս յիշելով որ ընդհանուր առողջութիւնը բաղկացած է գործարանակազմի բազմաթիւ և զանազան գործիքների ամբողջութեան ներդաշնակութիւնից։ Սա կամենում եմ փորձեր ցոյց տալ գլխաւոր գործարանների նշանակութիւնը՝ սկզբում ջոկ ջոկ առած, յետոյ ամբողջութեան հետ կապուած, գարձնելով առանձին ուշադրութիւն այն վնասների վերայ, որոնք յառաջինում են կանոնաւորապէս պարապած մշակի և արուեստաւորի գործուներութիւնից։ Կ որոնցից որոշ աստիճանով կարելի է խոյս տալ կիրակուայ հանգիստը ներմուծելով։  
Կրծքի խորշում՝ գետեղւող լնդերքը այսինքն աշ ու ձախ թոփերը և սիրտը միմեանց հետ սերտ կապուած են, այս գիտէ իւրաքանչիւր մարդ անձնական փորձով։ Եթէ մենք սկսումնք աւելի արագ շնչել, շտւտով սիրտը սկսում է նոյնպէս աւելի արագ բարախնել։ Նթէ մեր մէջ երեսումէ սրտի բաղխոց, մինք ակամայ սկսումնք խոր շնչել, որովհետեւ մենք զգում ենք, որ սիրտը աւելի թեթեւութիւն, է ստանում։

Թոքի գործունեութիւնից առանձնապէս կախուած է՝

1) Արիւնի գոյնը, սորա հետ և մորթու գոյնը և քոլոր արտապին տեսքը, մի խօսքով առողջութեան և ախտաւսրութեան այն տպաւորութիւնը, որ ազդում է իւրաքանչյւրը մեզանից ուրիշների վերայ, Զեւունակ բաղադրիչ մասերը՝ արիւնի գրնդակները, որոնք միլիարդներով լողում են արիւնի մէջ, առանց որոնց արիւնը հասարակ ջրի նման կիրնէր, թթուածնի պաշար են ստանում թոքերի ահագին պնօթացանցի մէջ, որը կարող է ը

ծածկել մօտաւորապէս 60 քառակուսի մետր տարածութեամբ հրապարակ։ Արիւնի գնդակները ծաւալով մեծանում են և պայծառ կարմիր գոյն են ստանում թթուածին ստանալուց յետոյ։ Մինչեւ այդ ժամանակ նոքա մոյզ կարմիր և փոքր էին, որովհետեւ՝ ճանապարհին դէպի թռքը՝ նոքա կուլ են տուել զանազան անկուածներից ախտաթթու։ Նոքա այժմ ածխաթթուն գուշրս են տալիս, ուստի մարդուց (ինչպէս և ուրիշ կենդանիներից) արտաշնչած օդը նոյնչափ թունաւոր է, որչափ և մասանների օդը, ուր զանազան խմորւող հեղուկներ արտադրուածնեն ածխաթթու։ Խուռակով հիւանդ երեխան, որ չի կարողանում իւր թռքերից ապակսնուած օդը դուրս մղել, բոլորովին խեղդամահ է լինում, այնպէս, ինչպէս և մառանում գըտնուող մարդը, որ ներշնչում է թթուածնի փոխարէն ածխաթթու։ Խւարքանչիւր մարդ, որ իւր շնչառութեան վերայ ուշադրութիւն չի դարձնում, ով թոյլ ու թեթև շունչ է առնում, պահումէ իւր թռքերի մէջ ածխաթթուի մի մասը։ Ճըշմարիտ է խեղդամահ չի լինում, բայց նորա մէջ երեան են գալիս ջարդուածութիւն, յօգնածութիւն, ջղային ցաւեր, մոտաւոր գործունէութեան թուլութիւն, արտաքին վատ տեսք, երբեմն մորթու կապտաւուն գոյն։ Ընդհանառակը ով շնչումէ լուս, ազատ, ամբողջ կրծքով, նա մղումէ բոլոր ածխաթթուն թռքերից գուշրս, ստանումէ վարդագոյն մորթի և լնդհանրապէս թարմ ու զուարթ տեսք։

Ինչպէս ինքն ըստ ինքեան պարզ է, արիւնի գնդակները կարող են թթուածին ստանալ միայն այն ժամանակ, երբ վերջինս բաւական քանակութիւնով գտնւումէ շրջակայ օդի մէջ։ Գործնական կեանքի մէջ վերին աստիճանի նշանաւոր է ուշ գարձնել ազատ՝ բաց օդի և բնակարանների ու արհեատանցների փակ օդի մէջ եղած հակադրութեան վերայ։ Լաւ բաց օդի օրինակ կարող է լինել քաղաքից դուրս գտնուած օդը, որ ասանդքումէ անտառների ու մարգագետինների վերայ։ այս օդը կատարելապէս մաքուր է և հանապազ պարունակումէ, բացի սոլորական թթուածնից, գեռ ամենալաւ որակութիւն ունեցող թթուածին, որ կոչւումէ օզօն և արտադրուումէ արեի լուսի՝ բուսական աշխարհի վերայ ունեցածն երգործութիւնից։ Քաղաքի բաց օդը՝ թէև պարունակումէ պիտոնի թթուածին, օդօնի

պակասութիւն ունի. վերջինիս պարունակութիւնը այնքան նուազ է, որքան քաղաքի մէջ պակաս են պարտէզները, բուլ-վարները և օդի ազատ հոսանքը: Քաղաքի օդը ոչ միայն քիչ թարմ է այլ և սակաւ մաքուր է, որովհետեւ անդադար խառնւում են նորան շատ գանաղան տեսակ փոշի: Թարմ, մաքուր օդը թոքերի համար նոյն է, ինչ որ թարմ՝ մաքուր ջուրը ստամբոսի համար: Քաղաքի օդը նման է կանգնած պղտոր ջրին:

Փակ օդը առողջապահական պահանջներին այնքան քիչ է բաւականաւթիւն տալիս, որքան աւելի կտրուած է արտաքին օդի մուտքը լաւ օդամաքրիչ լինելուց: Կացարանում գտնուած օդի մէջ եղած թթուածները շուտով ծախուռմէ, որովհետեւ սենեակում գտնուածներից իւրաքանչիւր ոք կուլ է տալիս իւր մասը՝ 31 գրամ մի ժամում, և այս պահանջը կարող է միայն այն տեղ նորոգուել, ուր արտաքին օդը անընդհատ ներս է հռուած ամենօքից, ը 600 խորանարդ ոտնաչափ քանակութիւնով ամէն մի ժամ ամէն, մի մարդու համար: Զմեռուայ օրերը արտեստական լուսաւորութեան պատճառով թթուածնի ծախը նշանաւոր կերպով աւելանումէ, որովհետեւ ճրագը, լապտերը և գաղի բացը կարօտ են թթուածնի՝ գրեթէ՝ հաւասարապէս մարդկանց հետ: Սորա վերայ պէտք է աւելացնել՝ թէ փակ օդը փշացնումէ, և գրականապէս փշանում է ածխաթթուի հաւաքուելուցը, որը արտաշնչումէ ներկայ եղողներից իւրաքանչիւրը 40 գրամ քանակութիւնով ամէն մի ժամ: Նոցա համար, որոնք սկզբիցը գտնուում են այսպիսի օդում, ապականութիւնը այնպէս նկատելի չէ լինում, ինչպէս ամէն դրսից եկող մարդու համար: Վերջինս իսկոյն զգումէ նեխած կծու հոտը, սորա հետ միասին մտնողի շունչը կտրուումէ և արեւնը զարկումէ երեսին:

Եթէ մի հայեացք քցենք որ և իցէ մշակի կացարանի վերայ, լինի այս ծխախոտի, գործարանի արհեստանոց, կամ հիւմառան, կամ ատաղձագործարան, առուտուրական կամ փոստային հաշուետուն՝ միայն մի հայեացք քցենք, ասումենք, և բաւական կլինի համոզուելու թէ բոլոր այս կացարանները բաւականութիւն չեն տալիս օդանորոգութեան ամենահամեստ պահանջներին, և թէ այն տեղ գտնուած բոլոր մարդիկը իւրեանց գործարանակազմը սեստեմատիկաբար լցնում են շընչ-հեղձական կամ խեղդուկ արիւնով, ինչպէս մենք կոչումենք

ածխաթթուով ծանրաբեռնած արիւնը:

2. Այս փակ օդը ոչ միայն փչացած է, այլ և մաքուր չէ. եթէ քաղաքի բաց օդը մենք արդէն սորիպուեցանք համեմատել պրդտոր ջրի հետ, այս համեմատութիւնը ևս առաւել գործադրելի է այն սղմուած օդի վերաբերութեամբ, որի մէջ մի քանի մշակ միասին անցնում'ն ամբողջ օրը: Գործանոցներում, ուր հիւնութիւն, առաղձագործութիւն են անում, ծխախոտ են շինում, քաթան և այլ հիւսուածներ են պատրաստում, օդի մէջ եղած փոշու մասին, վկայում են նոյն իսկ մշակների գէմքերը, վկայում են և լուսամուտները: Բայց և զանազան հաշուառներում, մանաւանդ այնպիսիներում, ուր ածուխ են վառում, ապակեայ մաքուր շերտիկը, որ մի քանի օր մնումէ դրած, արդէն ծածկումէ փոշու միծ քանակութիւնով, որ խոշորացոյցի տակ ներկայանում է իբր փոքր բեկորներ: Այսպիսի կացարանների պատուհաններով թափանցող արեսի ճռուագյթները ներկայանում'ն իբր մանր փոշու զանգուածից բաղկացած սիւներ, փոշուոր բարձրանում է օդի մէջ ներկայ եղաղ ների ամենափոքր շարժումից: Աւելի խոշոր փոշու տեսակները, որ յառաջանում են քար տաշելու և յախճապակեայ անօթպատրաստելու ժամանակ ելն, արդէն ամենքին յայտնի են, որ ընկնում են թռքերի մէջ, մտնում են նոցա անկուածի մէջ և շուտով հասցնում են այս կամ այն թռքային տկարութեան: Աւելի քիչ է ընդհանրացած և ուշադրութեան արժանի եղած այն փաստը՝ թէե այս մանր, այսպէս ասած, արեերեւ փոշին, իւր անլինասակար երեւալուն չնայելով է նոյնպէս թռքերի ամենանենգաւոր թշնամին: Բանը նորանումն է՝ որ խոշոր փոշին ընկնումէ յատակի վերայ և ընդհանրուպէս սպառնումէ միայն նոցա, որոնք մօտեցնումեն բերանները փոշի արտադրող նիւթին. մանր փոշին՝ ընդհակառակը՝ անդադար խաղումէ օդում: ուստի և իւրաքանչիւր կոշկակար, գերձակ, գրագիր, փոստի աստիճանաւոր, հեռագրատան պաշտօնեայ, օրուայ մէջ մըտցնում են իւրեանց թռքերի մէջ ահագին քանակութիւններով փոշի, որ պատճառումէ կոկորդի գրգիռ և յառաջացնում քերծող, կածտող հազ, սակաւ կեղտոտ ըլղամով: Փոշու այս տեսակ գործարանակազմի մէջ մտնելը այնչափ վնասակար է, որչափ անշարժ է մարդուս կենցաղի եղանակը, որչափ քիչ է

վարժուում շնչառութեան մէջ։ Նայ որ ներշնչումէ փոշին կաքաւելու ժամանակ, յետ է գարձնում նորան, որովհետև մարմնու կենդանի շարժողութիւնը պահանջում է նոյնչափ կինդանի ներշնչութիւնը ու արտաշնչութիւնը, կամ կարծն ասել՝ պահպանում է թոքերի արագ օդափոխութիւնը։

Յ. Շաաերը մշակներից՝ լսելով բժշկից աւելի շարժողութիւն անելու պատուէրը (ուրիշ խօսքերով լիտպէս շնչառութեան մէջ վարժուելու պատուէրը), ոսվորաբար արտայայտում են, թէ շնորհիւ իւրեանց պարապմունքներին՝ նոքա աւելի քան թէ բաւականացափ են շարժւում։ Լինի այս գործ արանի գործ, կամ մի որ և է տնային աշխատանք, ինչպէս լուացքը, սենեակների հաւաքելը, ամանների մաքրելը և լ։ Զյիշելով այն, թէ թէ այս տեսակ շարժողութիւնը չի կարող առողջ լինել արդէն այն պատճառով, որ սա կատարւումէ անառողջ օդի մէջ։ Հարկաւոր է յիշել, թէ բոլոր այս տնային և արուեստային մշակների շարժողութիւնները միակողմանի են, և մի որ և է մըկնակների խորակովէ կատարւում, շարժողութեան բոլոր գործարանների գաշնաւոր գործակցութեան վերայ չի կարող այս տեղ խօսք լինել։ ուստի այս շարժողութիւնները ներգործումն է, որ վերին ծայրերը (ձեռքերը) շարժի մէջ են մտնում ուսի մասից կամ այսպէս ասած ուսի գոտուց, որ սարդած է թոքերի գագաթների վերայ՝ կտուրների ծպեղի (միջնավայրում ձըգուած լային) նման։ Որպէս զի թոքերի գագաթները կարող լինին կատարել լիտպէս շնչառական շարժողութիւններ։ Հարկաւոր է որ ուսի գոտին տեղի տար կամ նահանջէր նոցանից զսպանակի նման, որ չի կարող առանձնապէս գիւրաւ լինել, նաև այն դիպուածում, երբ ձեռքերը ցած թողած՝ կամքընկած են առանց գործի; Բնազգապէս այս հասկանում՝ են այն մարեն առանց գործի; Բնազգապէս այս հասկանում՝ են այն մարդիկ՝ որոնք՝ վազել սկսելով, ձեռքերով յենումեն կողքերի վերայ, հարելի է հասնել ևս առաւել թեթեւութեան՝ ձեռքերը գլխի վերայ գնելով։ Բոլորովին հակառակն է լինում՝ օրինակ ջուր կրելու ժամանակ, երբ շնչառութիւնը նեղումէ ամենազգայի և նշանաւոր կերպով։ Եւ նոյնը իսկ լինումէ՝ միայն փոքր տատիճանով՝ ամենայն ժամանակը, երբ ձեռքով են աշխատում։ Միևնունը կարելի է ասել և կարգադրութեան մասին

(վերջինովս ես հասկանում եմ այն դրութիւնը, որ մարդիկ ունենում են գրելու և կարելու ժամանակ և լին) որովհետեւ մարմնու և այս նստած ու դէպի առաջ կռացած դրութեան մէջ՝ ուսի գօտին լինում է անշարժ ծղու (առաջաբազուկ) յենուելուց, այս տեղից հետեւում է՝ թէ թռքերի գագալիները պատշաճաւոր կերպով չեն կարող շունչ առնել, որը հարևանցի յիշելով, օգնում է նոցա մէջ ներշնչած փոշու հաւաքուելուն:

5. Եթբ այստեսակ միակողմանի բանող կամ կոր դիրքով աշխատող բանւորները սկսում են գանգատուել կրծքի ցաւի վերայ, կարելի է համոզուած լինել, որ այս ցաւը կախուած է կրծաթաղանթի կամ կողաթռքային թաղանթի զնասուելուց: Թռքերը զետեղուած են թաղանթի պարկի մէջ ինչպէս մատը դարձրած ձեռնոցի մէջ, այս դիպուածում՝ թաղանթի երկու թերթի (կրծքի և թռքի թերթերի) դէպ միմեանց դարձրած հարթ ու թաց մակերևոյթները թոյլատրում են թռքերին ազատ բարձրանալ և իջնել ներշնչելու և արտաշնչելու ժամանակ: Սակայն, եթբ կրծքի վանդակը ընկնում է ծանրաբեռնուած կամ անշարժ կերպով ամրացած ուսի ճնշաղութեան տակ, կրծքի թաղանթը կնճռւումէ, ծալւում է, ցամաքում է, և թռքերի շարժողութիւնը թաղանթային պարկի մէջ դժուարանում է և կորցնում է իւր կանոնաւոր հարթութիւնը: Սորանից յառաջացած ծակոցի դէմ չեն կարող օգնել ոչ սրուակները և ոչ քրտնաբեր բժշկութիւնը. այստեղ օգնում է միակ միջոցը՝ ուժեղ, ազատ խոր շնչառութիւնը, շնչառութիւնը ամբողջ կրծքով:

Սիրուր թռքերից ստանալով այնտեղ պիտանի դարձած արիւնը, իսկայն մղում է նորան աւագ զարկերակի կամ աօրաայի մէջ. վերջինս այն խողովակների կամ անօթների ընդարձակ համակարգութեան սկզբնական մասն է, որ մատակարարում է արիւն ամբողջ մարմնուն մինչև վերջին թելին կամ մաշկին, և մատակարարում է այնպէս առատ, որ լուսի տակ զննուզ մասերը, ինչպէս օրինակ՝ մատերը կամ ականջը պայծառ կարմիր գոյն ունեն, արիւնով համահաւասար լքցուելու պատճառով: Բայցի գունաւորութիւնից, անկուածները ստանում են այս ճանապարհով իւրեանց համար սննդարար հիւժ և տաքութիւն:

Զննենք անօթների համակարգութեան երկու բաժինը՝ զարկերակները՝ կամ արտերիանները, և հասարակ երակները կամ վենաները:

6. Զարկերակները իւրեանց անունը ստանում են իւրեանց ցոյց տուած զարկից կամ պուլսից (Հրայթ). Զարկ հոչուած երեոյթը ծանօթ է իւրաքանչիւրին՝ ձեռքից ոչ հեռու գըտնուած որոշ տեղի դիտելուց կամ շօշափելուց՝ այդ տեղ նկատւամ է արիւնով լցուած փափուկ խողովակ, որ բարձրանում է և իջնումէ մօտաւորապէս ամէն վայրկեան։ Բայց այսպիսի զարկող տեղեր տարածուած են ամբողջ մարմնու վերայ, այնպէս որ մարմինը կարելի է ենթադրել իրեւ մի կմախք, որի վերայով վազում են վերև և վայր այսօրինակ զարկող խողովակներ, որոնք մարմնու աւագ զարկերակի ճիւղաւորութիւններն են. այս աւագ զարկերակը շարունակ բաժանուելով մանր և մանր ճիւղերի աարածւումէ վերև դէպի գլուխր, և վայր ողնաշարի վրայով՝ ձեռքերի և ոսների երկայնութիւնով։ Մարմնու մորթին և մկնակները մի տեսակ կեղև են, որ պաշտպանելով այս անօթները արտաքին աշխարհից, բայց և այնպէս արգելք չեն լինում ոչ նոցա ծուապտոյտ տարածուելուն և ոչ նոցա զարկին։ Ընդհակառակը, անօթի վերայ եղած ամէն ամուր ճնշողութիւն կամ մի որ և է յօդերի ճկուելուց յառաջացած անսովոր կամ յարատե սղմելը կարող է դժուարացնել արիւնի ընթացքը նաև յետ դարձնել վերջինս։ Երբ վիրաբոյժը գործ է ունենում արիւն ծորող զարկերակի հետ, որ վնասուած է սրունքի մի որ և է տեղում՝ և ձեռքի տակ չի ունենում հարկաւոր գործիքներ, նա ճկումէ հիւանդի ծունդը և սորանով կանգնեցնումէ արիւնչոսութիւնը. վերջինս կանգնումէ անօթի ճկուելուց և սղմուելուց ծնգափոսի մէջ։ Յօդերի անկանոն դրութիւնը ունի սոյնանման ազդեցութիւն չվնասուած անօթների համակարգութեան վերայ։ Այս ծանրակշիռ առողջապահական կէտը մինչեւ այժմ այնքան սակաւ ուշադրութիւն է դարձրել իւր վերայ գործնական կեանքում, որ ես պարոք եմ համարում սորա վերայ մի փոքր մանրամասնօրէն արծարծել միտքս։

Եթէ նստած ժամանակ, մի ոտը միւս ոտի վերայ քցենք, կարելի է շուտով նկատել ինչպէս քցած ոտի ծայրը ամէն զարկե-

բակի հարուածից բարձրանումէ. կամ եթէ թեթև կերպով գէմ տանք արմուկը սեղանին և հտգյնենք բարձրացած բութի վերայ մի թել, որին կապած լինի մի օղ՝ այն ժամանակ վերջինս կախի ճռանակի պէս տատանել: Սեղանի շարժողութիւնը սեղանապայշախ ժամանակ նոյն երեսոյթն է, ինչ որ օդի ճօճուկիլը: Եթէ մօտեցնենք ստորին ծնօտը, վերինին, թողնելով նոցա մէջ ամենափոքր տարածութիւն, կարելի է լսել, ինչպէս զարկերակի իւրաքանչիւր հարուածից ստորինի կտրող ատամները բախումեն վերին ծնօտի կտրող ատամներին: Բոլոր այս երեսոյթները մեկնումեն շատ գիւրաւ. եթէ երեսակայենք՝ թէ իւրաքանչիւր յօդի մէջ կայ մի զարկող երակ, որը ամէն երակազարկի հարուած տալուցը ուռչումէ, և ապա ընկնումէ: Եթէ մեր ոտը, ձեռքը կամ ծնօտը թոյլ, անսալիպողական ենք պահում, նոքա ակամայ հետեւումեն զարկերակի շարժին. ստկայն բաւական է մկնակների ամենափոքր լարուելը, և յօդի անօթի վերաբերութեամբ եղած՝ այս թուլութիւնը իսկոյն անհետանումէ: Իսկ մկնակների աւելի ուժգին լարուելը և յօդերի ճրկուելը կարող է նաև բոլորովին դադարեցնել արիւնի զարկն էլ՝ ընթացքն էլ. ինչպէս վերելը արդէն մենք այս տեսանք մի քանի անգամ: Ամէնքին յայտնի է այն իրողութիւնը, որ ծոյլ աշակերտները կամենալով՝ հիւանդութեան պատճառով տպատուել գասերից, գիտեն ժամանակաւորապէս երակազարկի թուլութիւն յառաջացնել՝ սորա համար նոքա՝ լսելով բժշկի քայլերը, սաստիկ ճկումեն ձեռքը արմուկի և ծղու ու թաթի յօդերում, յիտոյ արմուկը զարկումեն մի կարծը բանի: Երեւակայեցէք այժմ մ: բանտոր, օրինակ՝ մի ատաղձագործ, որ կատարումէ սոյնանաւան շտրժողութիւն իւր աջ ձեռքով օրուայ կէսի ընթացքում: Եթէ զննենք մեր հարցը համակարգօրէն՝ մենք կգանք այս հետեւանքների:

Երակազարկի ազատ, ոչնչից չդժուարացած շարժողութեանը բարեյաջողումեն մարմնու և առանձին անդամների բոլոր այն դրութիւնները, որ մենք բնաղդումով տալիս ենք մեզ այն ըռպէներում, երբ մենք վճռում ենք թոյլ տալ մեզ « յարմար կերպով թեք ընկնել » կամ « լաւ ձգուել » են: Երեխաները առանձին հնարագիտութիւն և գեղարուեստականութիւն ունին այսպիսի գրութիւններ և շարժողութիւններ որոնելու մէջ,

սրոնք ի միջի այլոց ասելով, գաստիարակների լեզուով սովորաբար կոչւում են « անպատշաճ », վատթար, դարովելի ձեւեր » : Աւելորդ չէր լինիլ՝ որ գաստիարակները հասկանային՝ թէ երեխաների գործողութիւնների մէջ յաճախ խոր իմաստ կայ ծածկուած : Այս հասակի մարդկային էակները, որոնց մէջ դեռ չեն հանգչել և աղաւաղուել բոլոր բնական հակումները, թէ այսպէս թէ այնպէս զգում են մի ընդհարումն, որ յառաջանումէ մի կողմից զարկող անօթների համակարգութեան, միւս կողմից մկնակների ու ոսկոռների մէջ ամէն անգամ՝ երբ մարմնու գիրքը ստիպողական է . ուստի նոքա ունենում են միշտ հակումն այնպիսի գիրքեր ընդունելու, որոնք աւելի բարեյաջող լինէին արիւնի կարգաւոր ազատ ընթացքին անօթների մէջ : Սակայն և մինք՝ հասակաւորներս՝ չենք հրաժարում հետեւ երեխաներին այն դիպուածներում, երբ մեր գլուխը ամբողջապէս զբաղուած չի լինում « գործերով », պարապմունքով, և երբ մինք աւելի ուշադրութիւն ենք դարձնում մեր մարմնու վիճակի վերայ : Այսպէս՝ իւրաքանչիւրը մեզանից՝ մտնելով երկաթուղու կառքը մրցումէ միւս ուղեկիցների հետ, որքան կարելի է, յարմար գիրք բռնել: Էական նպատակը այս աշխատութիւնների այն է, որ նստած ժամանակ կարելի լինի յօդերը կիսաճկուած պահել՝ ճկելու և ուղիղ ձգելու միջի գրութիւնով, որը՝ արգարեւ՝ աւելի լաւ թոյլ է տալիս արիւնին կանոնաւոր կերպով և ազատօրէն ընթանալ մարմնու մէջ, Եթէ երկաթուղու կառքը այնչափ լիքն է լինում, որ հարկաւոր է լինում հաւաքուած անգամներով նստել, մն քանի ժամանակից յետոյ մեր ոտերը արիւնի նոււաղ գալուցը « նիրհում են », կամ « թմբում են » . երկաթուղու գնացքը կանգնելուց յառաջ մեզանից իւրաքանչիւրի մէջ յառաջ է գալիս միտումն վերկենալ տեղից և՝ որքան կարելի է՝ « դրստել », մեր ձեռքերը ու ոտերը, լաւ ձգուել՝ ուրիշ խօսքերով ասած՝ վերադարձնել ազատ շարժողականութիւնը անօթային համակարգութեան, որը երկար ժամանակ մնացած էր ընկճուած :

Այս փորձական մեկնութիւնները կարող են նախապատրաստել հասկանալու այն տեսութիւնը, որի համաձայն մարմնու ամէն անյարմար դրութիւնը իւր վնասակար հետեւանքներով ես առգրաւմեմ զարդերաներէ ճկուելու և ամէն այսպիսի ճկուելը,

սրը սովորական և առօրեայ մի բան է մի որոշ անհատի կեանքի մէջ, ես կոչում եմ ընդէլական: Անօթի ընտելական ճկուելուցը յառաջ է գալիս արիւնի ընթացքի ընտելական դանդաղելը և կանգնելը յայտնի մասերում: և ժամանակավ այս հասցնումէ արիւնի յետադարձ հոսանքին, այսինքն արիւնի այն շարժողութեանը, որը ճիշտ ներհակ է առաջուայ ուղղութեանը. սկզբից այսպիսի ներհակ շարժողութիւնը տարածւումէ միայն մերձուոր՝ վերեւը գոնուած զարկերակների վերայ, բայց կամաց կամաց նա բարձրանում է շարունակ վեր ու վեր, մինչեւ արիւնի շրջանառութեան ելակէտը՝ սիրտը: Արիւնի այսպիսի ներհակ շարժողութեան ախտային նշանակները համապատասխանում են այն բանին, որը հասարակ բարբառով սովորաբար կոչումէ ոռոգութիւն (կօնկեսցիա):

Անօթների ընտելական ճկուելու մի քանի տեսակը կախումն ունին մարմնու ընտելական դրութիւններից, միւսները ընտելական շարժողութիւններից:

ա) Երութիւնից կախուած անօթների ճկուելը կարող ենք դիտել՝ օրինակի համար՝ դպրոցի սեղանների վերայ նստած տըղայոց մէջ: Երբ մենք նստած ենք վագօնում, գլխաւոր անյարմարութիւնը ընկնումէ մեր ոտերի վերայ՝ մենք կարող ենք մեր թիկունքը յետ քցել, ձեռքներս, վիզներս, գլուխներս կարող ենք պահել ինչպէս հաճելի է մեզ: Մինչդեռ դասարանում նստած աշակերտը՝ ոչ միայն չի կարող ստները ձգել այլ և պէտք է գեռ նստի ուղիղ ձգուած թիկունքով: Որպէս զի մի փոքր տանելի լինի նստելը, տղան կռացնումէ շատ առաջ մարմնու վերևի մասը սեղանի վերայ, և ընդ սմին անհրաժեշտ կերպով ճկումէ զարկերակների երկու մեծ ճիւղը, որ դուրս են գալիս որովայնից աճուեկի վերայով դէպի ազդքները, և որոնք գըտնըւում են սրտից ընդամենը մօտ մի մէժք հեռաւորութիւնը: Ուները նեցուելի վերայ դնելով՝ նա ճկումէ զարկերակները ինչպէս ոտի ու օրունքի, այնպէս էլ ծնգի յօդերում: Այնպէս որ նա ունենում է երեք զոյգ ընտելական ճկուածութիւն, որոնց վերայ աւելանումէ ոյլ ևս չորս զոյգը, երբ աշակերտը սկսումէ գրել համարել եւն. այսինքն երբ գլուխը, վիզը, թաթի (դաստակի), արմուկի և ուսի յօդերը ստիպողական դիրք են ստանում: Այն յանախ զիսուածներում՝ երբ աշակերտնե-

րը նստած են նեղուած, և երբ սորա պատճառով երկու ձեռք քերը սեղանի վերայ դնելը անկարելի է գառնում, տղան ըստիպուած է լինում պտտել աջ ուսը ու ողնաշարն էլ, ընդ սմին աւելանում են ողնաշարի վերայով վազող զարկերակների ճկուածութիւնները:

Գրող տղայի այս նկարագիրը կարող է գործադրուել և չտփահաս մարդկանց ամբողջ մեծաքանակ և բազմազան ամբոխի վերաբերութեամբ, որոնք պարապում են գրաւոր գործով հաշուարաններում, գրասենեակներում փոստում և հեռագրատան մէջ եւն:

Ընտելական պրօֆեսիօնական շարժողութիւնից յառաջ եկած զարկերակների ճկուածութեան ամենալաւ օրինակ կարող է լինել ատաղձագործը, որ անդադար շարժում է մուրճը, կտմ աղոցող հիւսնը: Լաւ օրինակ է և փոստի աստիճանաւորը, որ կնիք է դնում նամակների վերայ, և զբաղուած է այս գործով շարունակ 12 ժամ: Գերմանական մեծ փոստատներում միշտ ուղարկում են օրական 20,000 նամակ, ամէն նամակի վերայ հարկաւոր է դնել երկու կնիք, որով զբաղուած են մեծ մասսի միայն երեք ծառայող, առաջարկում ենք հաշուել՝ քանի անդամ օրը աջ ձեռքի զարկերակը պէտք է ճկուի այս թշուառների ամէն մէկի թաթի (դաստակի), արմուկի և ուսի յօդերում:

Խնքնըստինքեան երեսում է որ գործնական կեանքում ոչ միշտ կարելի է բաժանել միմեանցից ոնօթների այս երկու տեսակ ճկուածութիւնը. շատ յաճախ երկուսը միաժամանակ են յառաջ գալիս: Այսպիսի խառն ճկուածութեան, կամ գրութիւնից ու շարժողութիւնից յառաջ եկած՝ միաժամանակ ներկայ եղող ճկուածութիւնների՝ օրինակ կարող է լինել այն գործիքը, որը ներկայումն դարձել է ճշմարիտ համաշխարհական ուժ. ես խօսումեմ կարեմեքենայի մասին: Բանող կինը մեքենայի առաջ նստած է ինչպէս աշակերտը գրասեղանի առաջ, այն զանազանութիւնով միայն, որ նորա գրութիւնը աւելի անյաջող է, որովհետեւ նա պէտք է նստի բարձր աթոռի վերայ. այսպիսով նա միշտ լինաստումէ նոյն ճկուածութիւններից, որոնք յառաջ են գալիս աշակերտի նստած գրութիւնից, ընդ ոմին ձեռքերը ու ոտները միշտ յառաջացնում են ճկուածութիւններ,

որոնք պահանջւում են պրօֆեսսիօնական ընտելական շարժողութիւնից: Եւ հարկաւոր է յիշել՝ թէ կարանող կինը սովորաբար աշխատում է անդադար, բոլոր երկար ու երկար օրը, որը մեծ տօներից յառաջ տեսում է մինչեւ կէս գիշերից ել գէնը:

7. Կարող կինը շատ յարմար օրինակ է մեզ, որով կարելի է համոզուել՝ թէ ինչ վնասակար հետեանքներ կարող է յառաջացնել անօթների ընտելապէս պահանջւող ճկուելը. խորհուրդներ տալիս ամէնքին և իւրաքանչիւրին աւելի ուշադրութիւն դարձնել կին աշխատաւորների այս բազմաթիւ գառակարգի վերայ, որոնց հետ սերտ կապուած են ծխախոտի, բամբակեղէնի քաղցրեղէնի և լն գործարանների կին բանւորների լեգէոնները:

Ես այսաեղ չեմ խօսիլ մննդառութեան վատ վիճակի մասին, որը ընդհանրապէս կախուած է նոցա անառողջ կենցաղավարութիւնից ամբողջապէս: Եթե այս կին բանւորների առանձին նշան, որ կախուած է ուղղակի անօթների մէջ ընթացող արիւնի խանգարուելուց՝ է մեծամասնութեան մէջ նկատուած հասու միզը. աւելի ծանր գիպուածներում նկատումէ իսպիպը (struma): Ընդհանրապէս վերջին ակարութիւնը բաւականին յաճախ պատահումէ և ուսում առնող պատահեակների մէջ, որոնց վզի անօթները միայն գրութիւնից են ճկում, Զուիցարացի առողջաբան Գիլիսոմի (Gilliastre) խօսում է նաև պաշտօնապէս գպրոցային խպիպի մասին: Բայց աշակերտների մօտ խպիպը զարգանում է աստիճանաբար և կամաց կամաց. իսկ աշխատող կանանց մօտ յաճախակի նա յառաջանումէ մի քանի եօթնեակի ընթացքում: Սակայն ես յիշում եմ հաստ վզի մասին ոչ իրեւ արիւնի շրջանառութեան ամենավատ, այլ աւելի աչքի զարնւող նշանի մասին: Եւս աւելի ծանրակշիռ և վնասակար են զանազան ներքին խանգարումները: Բոլոր կարեմեքենայի վերայ աշխատող աղջկերքը շատ շուտով սկսում են գանգատուել սրտի բաղիոցի, գլխի տափութեան և անդամների թուլութեան վերայ: Նոքա՝ ատաղձագործութեան աշակերտների հետ միասին, գիւրաւ հասնում են արիւն թքելու վիճակին: Խնչպէս վկայումէ՝ միւս հեղինակների շարքում՝ Անդիացի բժիշկ Պիկոկը (peacock), մշակ դասակարգի մէջ անշափ շատ են պատահում սրտի զանազան արատներ: Յաճախ պատահումէ, որ աշխատելու ժամանակ բանւորի «կրծքում»

մի բան տրաքւումէ» . յետոյ բժիշկը՝ զննելու ժամանակ՝ գըտ-  
նումէ նորա սրտի փակաղակներից մինը արատաւորուած։ Աս-  
կայն աւելի յաճախ պատահումէ, որ սրտի արատը զարգանում  
է միայն աստիճանաբար, երբ հիւանդը երկար ժամանակ սրտի  
պարբերական բաղնոց է ունեցել։ Աւելի յաճախ սրտի բաղնոց  
ունեցող մշակների բանը այն տեղն է հասնում, որ արիւն են  
թքում, թռփից արիւն է հոսում, որից կարող է յետոյ թռքա-  
յին բարակացաւ յառաջանալ։ Այս բոլոր երևոյթները կարուեն  
առկացոյց լինել մեր վերը յիշած այն գրութեան՝ թէ « մարդուն  
գործարանական կազմուածքի», մի մասի խախտուելը կարող է  
հասցնել ժամանակով ամբողջ շինութեան քանդուելուն։ Ցիշ-  
եալ նշանակների անօթների հետ ունեցած կապակցութիւնը  
հառկանալու համար՝ պէտք է սկզբից երևակայել մի ջրատար  
կամ ջրաբեր գործիք, որ կայացած է փափուկ աղիքից կամ խո-  
ղովակից և ջրամբարից։ Եթէ ջրի աղիքից արտահոսելուն ար-  
գելք կայ, իսկ ընդունաբանից շարունակում են գալ նոր և նոր  
ջրի բաժիններ (ինչպէս հրշէջ ջրմուղի մէջ), աղիքի պատերում  
զանազան տեղեր յառաջանում են պատուածքներ և փռուա-  
ծութիւններ. և վերջ ի վերջոյ ջուրը՝ չկարողանալով յառաջ  
խաղալ պատշաճ ճանապարհով՝ վերադառնում է ջրամբարը։  
Անցնելով կենդանի մարմնուն, մենք կտեսնենք թէ անօթների՝  
դրութիւնից յառաջ եկած ճկուելը՝ յառաջ է բերում արիւնի  
պարզ յետադարձ հոսանք կամ կանգառութիւն. իսկ շարժո-  
ղութիւնից յառաջ եկած ճկուելը յառաջ է բերում արիւնի  
անհաւասարաչափ, հրոյթօրէն կատարւող յետադարձ շարժու-  
ղութիւն. որքան բազմաթիւ են ճկուածութիւնները և որքան  
ասսորիկ ու տեղական են հրոյթները, այնքան աւելի զգալի է  
լինում արիւնի շրջանառութեան շեղումը սրտի վերայ, և ընդ-  
հանրապէս ամբողջ անօթային համակարգութեան վերայ։ Որով-  
հետեւ արիւնատար ուղիները շրջափակուած ամբողջ աթիւն  
են, ուստի արիւնը յետադարձ կանգառութեան փոփոխումն. ինչեւ  
այժմ վերջինս ամենուրեք հաւասարաչափ էր, իսկ այժմ նորա  
հաւասարաչափութիւնը խանգարուած է՝ մի քանի տեղերում,  
նա աւելի բարձրանումէ քան միւսներում։ Այս ճանտպարհով

Եղարդանում անօթային պատի փրուածութիւնը, որը յայտնի է լայնացումն անունովը. սոյն ճանապարհով շատ յաճախ ծագումէ և խպիպը, որովհետև պկի (կամ վահանաձեւ) գեղձը կայլացած է զարկերակների կծկից, որոնց միասին պահպանում է գեղձային նիւթը: Սրտի բաղխոցը հետեանք է կանգ առած արիւնի սիւնի և սրտի մղող ուժի ընդհարուելուցը, որը (ուժը) ընդհանրապէս կարող է յաղթել որոշ քանակութիւնով արեան: Եթէ յետագարձ ընթացքը լինումէ հրոյթերէն, և ընդսմին անսպասելի կերպով յանկարծակի՛ կարծող է սրտի միոր և է փակաղակը պատռուել: Երբ արիւնի կանգառութիւնը աստիճանաբար է հաւաքւում, այն ժամանակ փակաղակը չէ պատրռուում, այլ աւելանումէ ճնշողութիւնը թոքերի մէջ, որոնց մէջ շրջադառնումէ ամբողջ արիւնի երրորդ մասը (որը հաւասար է մօտաւորապէս Դքիլօգրամի): ուստի սրտի բաղխոցը և արիւնաթքութիւնը լինումեն յաճախ պատահող տկարութիւններից մէ կը այն մարդկանց մէջ, որոնք աշխատում են գրասենեալներում: արուեստանոցներում և գործարաններում: իւրեանց միակողմանի միատեսակ շարժողութիւններով՝ իւրեանց կուցած դրութեան մէջ աշխատելովը: « Աշխատանքի բաժանումը » ինչպէս և նպատակայարմար շինուէր տնտեսական ու գեղասիրական հայեցակէտերից, առողջապահական հայեցակէտից արժանի է նոհում դատապարտութեան, հէնց նորա համար, որ աշխատութեան մէջ սաստկացնումէ շարժողութիւնների միատեսակութիւնը: Կենդրոնացնում է մի կէտում անօթների ճկուածութիւն: Շարժողութիւնների այս պրօֆեսիօնական միատեստկութիւնը տպաւարուումէ զանազան արուեստաւորների ամբողջ արտաքին տեսքի ու գնացքի մէջ այնպիսի պարզութեամբ, որ ատաղձագործները կոշկակալները, գերձակները և լն. կարում են գիւրաւ ճանաչուել նաև այն ժամանակ երբ մենք տեսնում ենք նոցա բոլոր արուեստների համար միատեսակ եղած տօնային զգեստների մէջ:

8) Զարկերակներից յետոյ մեր գործարանական կազմուածքի ամենանշանաւոր մասը մկնակների համակարգութիւնն է, որը արտադրումէ աշխատանք: Սակայն մենք աւելի նպատակայարմար ենք համարում ոկսել նորան զննել՝ արիւնի շարժողութիւնը ամբողջապիս մեկնարանելը վերջանալուց յետոյ:

Ուստի առայժմ՝ երեւակայենք՝ թէ զարկերակները վազումեն մկնակների մէջ և բաժանումեն այնտեղ մագական անօթների, իսկ սոքա աստիճանաբար անցնումեն արիւնի շրջանառութեան միւս բաժինը, որը՝ ինչպէս արդէն մենք ասացինք՝ հաւաքումէ՝ ածխային թթուոյթ պտրունակով՝ գործադրուած արիւնը, և տանումէ գէպի թռքերը, որով վերջաւորումէ արիւնի շրջանառութեան պտոյտը։ Իրեւ հասարակ երակների կամ վենանելի օրինակ կարող են լինել այն անօթները, որ մենք տեսնումենք ձեռքի երեսին վրայ։ Այս կապոյտ գերձանները չունեն ոչ մի զարկ, նոքա կատարելապէս թւումեն նաև անշարժ, բայց ուստիկ աշխատութեան մէջ նոքա ուռչումեն, ձեռքերի վերայ, ինչպէս և ոտների ու գէմքի վերայ են։ Այս ուռչիլը ապացոյց է՝ թէ վենական արիւնի շրջանառութիւնը գրանըումէ մկնակների կողմից եղած ճնշողութեան ազգեցութեան տակ։

Աւելի շօշափելի կերպով կարելի է համոզուել ոորա մէջ, երբ գէխսենք այն երեսոյթը՝ որը յառաջ է գալիս ձեռքից արիւն առնելու ժամանակ՝ մատերի թեթև շարժողութիւնը այս գէպքում բաւական է լինում կանգնեցնելու արիւնի հոսանքը, որը բացուած անօթից զեղումէ իբր տեսանելի ծորան։ Որովհետեւ այս ճանապարհներով արիւնը ընթանումէ իւր ծանրութեան հակառակ, ուստի որոշ յարմար տեղերում փակաղակներ են զետեղուած, որոնք այնպէս են կարգադրուած, որ նոցա մօտից անցնող արիւնի սիւնը չի կարող վերագառնալ յետ։ Սակայն մարմնաւ խորշերում՝ մանաւանդ որովայնի խորշում այս տեսակ փոկաղակներ չկան, և արիւնի շարժողութեանը օգնումէ առանձին մի ուժ, որ կոչւումէ կրծքի ներծծութիւն։ Կրծքի վանդակի այս ներծծուղ գործողութիւնը ազգումէ և աւելի հեռաւոր վենաների մէջ գտնուած արիւնի ընթացքի վերայ, որին գժուար չի համոզուել, եթէ աճուկում շօշափենք ազգրի մեծ վենան՝ որովայն մտնելու տեղում, ոտի շարժուելուն պէս ձեռքը շօշափումէ վենայի մէջ գտնուած արիւնի յայտնապէս ծածանումն, որը կախուած է շարժողութեան հետ կապուած խոր շնչառութիւնով յառաջ եկած ներծծութիւնից։ Այս տեղից մենք տեսնումենք՝ թէ պտոշաճաւոր շնչառութիւնն էլ արիւնի պատշաճաւոր շարժողութեան համար մեր մարմնու

մէջ էական գործից է: Մոյլ, յոյլ ու թեթև շնչառութիւնը տանումէ դէպի արիւնի կանգառութիւնը որովայնի, լերդի և աղիքների մեծ ու լայնաբար ճիւղաւորուող վենաների մէջ, տանումէ դէպի որովայնի այն բազմաթիւ ու զանազան տկարութիւնները, որոնք յայտնի են հասարակութեանը հաւաքական Ռանչ, անունով: Սորանից պարզ երեսում է՝ թէ ինչու թանչային տկարութիւնները այսչափ աչքի զարնուող յաճախութեամբ պատահումեն բոլոր այն արուեստների մէջ, որոնցով պարապելը կապուած է մարմնու կոր կամ կռացած դրութեան հետ, կամ միակողմանի շնչառութեան հետ:

Իոլոր միակողմանի կերպով պարապող մշակներին՝ վենաների կողմից՝ միւս սպառնացող տկարութիւնը է՝ այսպէս ասած՝ վենաների հանգուցաւորութիւնը (գաւառական բարբառով կռոճութիւն) կամ վենաների լայնացած հանգոյցների զարգանալը: Զարկերակների ճկուածութեան նման այս հանգոյցները յառաջ են գալիս արիւնի կանգառութիւնից, բայց վերջինս վենաների մէջ պատճառումէ աւելի տեղական փոփոխութիւններ և դարգանումէ մկնակների անկանոն ձնշումից կամ անկանոն շնչառութիւնից: Վենաների հանգոյցները երբեմն կարող են յառաջ գալ յանկարծակի. այսպէս պատահումէ այն մարդկանց, որոնք բարձրացնումեն միանուագ ծանրութիւն, որ նոցա մկնակները մանաւանդ դէմ գնող ոտների մկնակները, բռնւումեն՝ այսպէս ասած՝ յանպատրաստից՝ և այս պատճառով յանկարծ կըծկըումէ իբր ցնցողաբար: Սոյնը կարող է պատահել և ձիառներին, որոնք մշտապէս ոտները դէմ են գնում սապանդակին: Վենաների հանգուցաւոր ընդլայնումն պատահումէ և լուցարաբներին, որոնք ստիպուած են աշխատելիս ոտները միշտ դէմ տալ յատակին: Անկանոն շնչառութիւնը՝ մանաւանդ արտաքնոց գնալու ժամանակ զօռ տալը՝ կարող է յանկարծ յառաջ բերել թանչային հանգոյցներ, կամ արդէն եղածները մեծացնել նշանաւոր կերպով: Որովհետեւ թանչային հիւանդութիւնը սկսումէ յամառող կապով, ուստի զարմանալի չէ, որ գործը շատ շուտով է հասնում թանչային հանգոյցների գոյանալուն: Զօռ տալու ժամանակ ուռչումեն նաև վզի երակները: Այսպիսով վենական խողովակի պատի ընդլայնումն և դուրս ընկնելը յառաջ է գալիս մկնակների լարուելու ժամա-

նակ՝ իբրև մկնակների շափաղանց ճնշողութետն հետեւանք. զօռ տալու ժամանակ՝ իբրև հետեւանք կրծքի ներծծութեանը՝ հոսանքի յետադարձ կանգառութեան փոխանցելուն։ Որովհետև վենաները ունին նուազ առաձգականութիւն՝ նոցա պատերը յոյլ են ուստի այսպիսի յետադարձ կանգառութիւնը ազգումէ ոչ ամբազջ համակարգութեան վերայ, այլ միայն այն տեղ, ուր ճնշողութիւնը աւելի սաստիկ է լինուած։

**Հարսանակելի:** նայուած նոր զար (Թարգմ.) Բժ. Մ. Զ.

առաջ առ աջ ուստի ճնշողութիւն նոր միանածնի մեջնախաց բարակութիւնը իմանալի զար։ Եթե այս ուստի մասն այսպիսի բարակութիւնը առաջ առաջ իսկապաց ՄՇՈՅ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ.

այս մասն այսպիսի բարակութիւնը նոր (մասն առ առաջ պահեն բարձրութեան) այս մասն մասն առաջ առաջ այսպիսի բարակութիւնը կանակնեան Ա. Կարապետի հրաշալի ուխտն, ուր կհանգչին ցայտմ մեծի Մկրտչին և Կարապետին սրբոյն Յովկաննու սրանց ելագործ նշխարքը և սրբոյ Աթանագինեայ եղիսկոպոսի մասունքը և սրբոցն Անտօնի և Կրօնիդեայ և երանեալ խոտաճարակաց մարմինները, ժամանակակից և վիճակակից Հայոց ազգիս քրիստոնէութեան։ Մեր Ա. Լուսաւորիչը հիմնարկեց զայն իր առաքելութեան առաջին քայլափախին, զի Խնակնեան մայրավանուց տաճարին անկեան քարը էջմիածնայ Մայր Աթոռոյն անկեան քարին ժամանակակից է, և այն օրէն և այսր ոչ միայն մեծամեծ գործոց և արկածից թատրոն եղաւ Ս. Կարապետ, այլ և անիմանալի զուգատիպութեամբ վիճակակից գտաւ միշտ Հայաստանի ցաւոց և խնդութեանց վիճակներուն։ Հայ քրիստոնեայն, այն օրէն՝ որ սուրբ խաչը բարձրացաւ իր երկրին վրայ և Ա. Կարապետին նշխարքը սկսան փառաւորուել, ուր իիսանեայ կուռքը կը պաշտուէր, շարունակ իւր աղօթից և պաշտամանց մէջ Ս. Կարապետին անունը նշանաբան առաւ իրեն, և ամեն արկածից մէջ Ս. Կարապետի հզօր քարեխօսութիւնը իրեն պաշտպան ճանշցաւ, և Խնակնեան քարձունքը եղեն Հայ քրիստոնէութեան մեծ ուխտատեղին, ուր իբր տասնուվեց դարերէ ի վեր, ոչ միայն մերձակայ քաղաքաց և գաւառաց այլ և հեռաւոր վայրաց և գտղթականու-